Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են վարչության պետը և Վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

5. Վարչության հիմնական խնդիրն է՝

իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը:

6. Վարչության հիմնական նպատակն է՝

Հայաստանի Հանրապետության ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումն ու պետական միասնական ագրարային քաղաքականության ձևավորումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են'

1) գյուղատնտեսության ոլորտում տիրող փաստացի իրավիճակի համալիր ուսումնասիրության և վերլուծության իրականացում, ոլորտի գործունեության բարելավմանն ու

արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում և միջոցառումների մշակում,

2) գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ծրագրերի, ծրագրային միջոցառումների, հայեցակարգերի, պետական աջակցության ծրագրերի և այլ իրավական ակտերի մշակում,

3) ագրոպարենային համակարգում ընդգրկված ոլորտները բնութագրող ցուցանիշների կանխատեսում և զարգացման ծրագրերի մշակման և ծրագրային միջոցառումների պլանավորման և ժամանակացույցի կազման աշխատանքների իրականացում,

4) ոլորտի զարգացման գերակա ուղղությունների կանխորոշում, մշակվող ծրագրերի ֆինանսավորման ծավալների և աղբյուրների որոշմանը մասնակցություն,

5) ագրարային ոլորտում տնտեսավարման ձևերի, մասնավորապես գյուղա-տնտեսական կոոպերացիայի խթանման քաղաքականության մշակում և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների համակարգում,

6) գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման վիճակի ուսումնասիրում, դրանց արդյունավետ օգտագործման ու գյուղատնտեսական հողերի շուկայի զարգացման քաղաքականության մշակում,

7) Եվրասիական տնտեսական միությանը և Անկախ Պետությունների Համագոր-ծակցության (ւայսուհետ՝ ԱՊՀ) անդամակցությամբ պայմանավորված գյուղատնտեսության պետական աջակցության, ագրոպարենային համակարգի գործունեության հետ առնչվող նյութերի նախապատրաստում և տրամադրում, իր գործառույթների շրջանակներում համատեղ աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցության ապահովում,

8) Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության հետ պայմանավորված 1994 թվականի ապրիլի 15-ին ընդունված «Գյուղատնտեսության մասին» համաձայնագրի շրջանակներում ոլորտին առնչվող տեղեկատվության մշակում և ներկայացում,

9) գենդերային և այլ բնագավառներին վերաբերող ծրագրային փաստաթղթերի

վերաբերյալ գյուղատնտեսության ոլորտին առնչվող առաջարկությունների և հաշվետվությունների նախապատրաստում,

10) ագրարային ոլորտի գործունեության հետ առնչվող Հայաստանի Հանրապետության գերատեսչություններից, տարբեր կազմակերպություններից ստացվող իրավական ակտերի նախագծերի և այլ փաստաթղթերի քննարկում և համապատասխան առաջարկությունների ներկայացում,

11) ագրարային ոլորտի գործունեությանն առնչվող քաղաքացիներից ստացվող առաջարկությունների, հարցադրումների, ծրագրային խնդիրների, առաջարկների քննարկում և համապատասխան ընթացքի ապահովում,

12) իր իրավասությունների շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների, հետազոտական կառույցների, միջազգային կազմակերպությունների և փորձագետների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ,

13) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, անհրաժեշտության դեպքում շահագրգիռ այլ մարմինների համագործակցությամբ, նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտներին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի, զեկույցների, հաշվետվությունների, ծրագրային փաստաթղթերի նախագծեր:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Գյուղատնտեսության աջակցության ծրագրերի նախագծման բաժին,

2) Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման բաժին,

3) Գյուղատնտեսական ռազմավարական գործընթացների համակարգման բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Գյուղատնտեսության աջակցության ծրագրերի նախագծման բաժնի հիմնական գործառույթներն են.

1) գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ծրագրերի, ծրագրային միջոցառումների, հայեցակարգերի, պետական աջակցության ծրագրերի իրավական ակտերի մշակումը,

2) գյուղատնտեսության զարգացման գերակա ուղղությունների, մշակվող ծրագրերի ֆինանսավորման ծավալների կանխորոշումը,

3) գյուղատնտեսության փաստացի վիճակի պարբերական վերլուծության և զարգացման միտումների ուսումնասիրությունների արդյունքում՝ ոլորտի գործունեության բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների և միջոցառումների մշակումը,

4) ագրարային ոլորտում տնտեսավարման ձևերի, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման քաղաքականության մշակումը և վերջինիս հետ առնչվող աշխատանքների համակարգումը,

5) գյուղատնտեսությունում տնտեսավարման ձևերի զարգացման, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության պետական ծրագրերի մշակումը, տվյալ բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

6) գյուղատնտեսական ռիսկերի կառավարման քաղաքականության մշակումը,

7) Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված գյուղատնտեսության պետական աջակցության, անդամ պետությունների ագրոպարենային համակարգի գործունեության հետ առնչվող աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցությունը և առաջարկությունների ներկայացումը,

8) գենդերային ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ գյուղատնտեսության ոլորտին առնչվող առաջարկությունների ներկայացումը և հաշվետվությունների նախապատրաստումը,

9) Նախարարի, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի, վարչության պետի հանձնարարականներով բաժինն իրականացնում է իրեն վերապահված այլ գործառույթներ:

11. Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման բաժնի հիմնական գործառույթներն են.

1) հանրապետության գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման վիճակի ուսումնասիրումը, դասակարգումը և դրանց տարբերակված և արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

2) գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված իրավական, նորմատիվային փաստաթղթերի մշակումը և դրանց իրականացումն ապահովող միջոցառումների մշակման աշխատանքների համակարգումը,

3) գյուղատնտեսական հողերի չօգտագործման պատճառների բացահայտումը և արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակումը,

4) գյուղատնտեսական հողատեսքերի համակարգված դիտարկումների անցկացման կարճաժամկետ և երկարաժամկետ, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառման, ոռոգման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակման մասնակցությունը,

5) Հայաստանի Հանրապետության մարզերի, Հայաստանի Հանրապետության ամփոփ հողային հաշվեկշիռների, համայնքների հողերի ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխությունների, համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի առաջադրանքների նախագծերի, հողային հարաբերությունների հետ առնչվող այլ փաստաթղթերի ու գրությունների քննարկմանը մասնակցությունը ու կարծիքների ներկայացումը,

6) ջրային ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը,

7) հողի շուկայի հետ կապված խնդիրների ուսումնասիրումը և իրավական դաշտի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակումը,

8) իր գործառույթների շրջանակներում Եվրասիական տնտեսական միությանը և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքային խմբերի քննարկումներին մասնակցությունը,

9) Նախարարի, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի, վարչության պետի հանձնարարականներով բաժինը իրականացնում է իրեն վերապահված այլ

գործառույթներ:

12. Գյուղատնտեսական ռազմավարական գործընթացների համակարգման բաժնի հիմնական գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի ագրոպարենային ոլորտի մասով միջոցառումների մշակման և դրանց իրականացման ընթացքի դիտարկման աշխատանքների իրականացումը,

2) գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի արդյունքների ամփոփումը և ոլորտի վերաբերյալ պարբերական (կիսամյակային, տարեկան) հաշվետվությունների կազմումը,

3) Եվրամիություն - Հայաստան համագործակցության շրջանակներում ագրոպարենային ոլորտին առնչվող տեղեկատվական և այլ նյութերի մշակման մասնակցությունը,

4) իր գործառույթների շրջանակներում Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցությունը,

5) Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցության հետ պայմանավորված 1994 թվականի ապրիլի 15-ին ընդունված «Գյուղատնտեսության մասին» համաձայնագրի շրջանակներում ոլորտին առնչվող տեղեկատվությունների նախապատրաստումը,

6) այլ գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից ներկայացված ագրոպարենային ոլորտին առնչվող ծրագրային փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

7) ոլորտի գործունեության հետ առնչվող քաղաքացիներից, կազմակերպություններից ստացվող առաջարկությունների և հարցադրումների քննարկումը, դրանց լուծման հետ կապված առաջարկությունների ներկայացումը,

8) Նախարարի, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի, վարչության պետի հանձնարարականներով բաժինը իրականացնում է իրեն վերապահված այլ գործառույթներ:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

14. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

15. Վարչության բաժինները ղեկավարում են Բաժինների պետերը:

16. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

17. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

18. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

19. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

20. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիրազորությունների, շփումների և նեկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: